ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Կադաստրի կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 2 մայիսի 2022 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

## 1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

«ՊՐԵՍ ՍՏԵՆԴ» ՍՊԸ

## 2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Սյունիք, համայնք Գորիս Գորիս ք. Կոմիտասի փողոց 1/3 հողամաս

## 3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Պետական / համայնքային / սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին պայմանագիր 27/04/2022թ. գ/մ 1180

## 4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 09-003-0090-0027
Մակերեսի չափը (հա)՝ 0.0006
Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի
Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Ընդհանուր օգտագործման
Գրանցված իրավունքի տեսակը՝ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

**ՎԿԱՅԱԿԱՆ N 02052022-09-0009, գաղտնաբառ՝ WLLGMXU9ZXFU**

*Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով*

## 5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

| Հ/Հ | Կադաստրային ծածկագիր | Տեսակ | Մակերես | Գրանցված իրավունքի տեսակ |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |

## Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Հողամասի կառուցապատման իրավունքը տրամադրվում է 5 տարի ժամկետով

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Անդրանիկ Աթայան

Զբաղեցրած պաշտոնը՝ Սյունիքի մարզային ստորաբաժանման անշարժ գույքի ռեգիստր

**ՎԿԱՅԱԿԱՆ N 02052022-09-0009, գաղտնաբառ՝ WLLGMXU9ZXFU**

*Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով*

Կադաստրի կոմիտե

**Նոտարական ակտի կոդ:** 612-20220427-109-5860458
**Նոտարական ակտի գաղտնագիր:** NBTYPD

# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
## ՊԵՏԱԿԱՆ /ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ / ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ, ՔԱՂԱՔ ԳՈՐԻՍ
երկու հազար քսաներկու թվականի ապրիլի քսանյոթին

**ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքը**, ի դեմս համայնքի ղեկավարի առաջին տեղակալ ԱՐՏՅՈՄ ԱՂԱՋԱՆՅԱՆԻ, որի անունից 25.04.2022թ. տրված թիվ 02-256 լիազորագրով գործում է համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բաժնի առաջին կարգի մասնագետ **ԱՎԵՏ ՎԱՐԴԱՆԻ ԴԱՋՈՒՆՑԸ**, ծնված՝ 11/04/1996թ-ին, ՀԾՀ՝ 2104960754, անձնագիր՝ AN0233572, տրված՝ 032-ի կողմից, 07/08/2012թ-ին, հաշվառված՝ ՍՅՈՒՆԻՔ, ԳՈՐԻՍ, ԳՈՐԻՍ, ՎԱՆՔԻ ՏԱՓ Փ., 21, Տ, որը գործում է ,,ՀՀ ՏԻՄ օրենքի,, համաձայն և կառուցապատման իրավունք ունեցող անձ՝ <<ՊՐԵՍ ՍՏԵՆԴ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն ԷԴԳԱՐ ԽԱՆԶԱԴՅԱՆԻ, որի անունից 22.04.2022թ. տրված թիվ Ե-17 լիազորագրով գործում է ընկերության աշխատակից **ԱՄԱԼՅԱ ԳԱՌՆԻԿԻ ԲԵԳԼԱՐՅԱՆԸ**, ծնված՝ 25/10/1970թ-ին, ՀԾՀ՝ 7510700027, անձնագիր՝ AN0775827, տրված՝ 032-ի կողմից, 22/12/2013թ-ին, հաշվառված՝ ՍՅՈՒՆԻՔ, ԳՈՐԻՍ, ԳՈՐԻՍ, ՎԱՆՔԻ ՏԱՓ Փ., 15, Շ, 1ԲՆ, համաձայն ,,Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 57-րդ հոդվածի 2-րդ մասի, ՀՀ Հողային օրենսգրքի $48^1$, 60-րդ հոդվածների, 76-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 5-րդ կետերիև Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշման, ՀՀ Գորիս համայնքի ղեկավարի 11.03.2022թ. թիվ 140-Ա որոշման և 26.04.2022թ. թիվ 300-Ա որոշման, ՀՀ Գորիս համայնքի ավագանու 09.02.2022թ. թիվ 25-Ա որոշման համաձայն կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1.Սույն պայմանագրով սեփականատերը պարտավորվում է **1քմ. համար 3000 (երեք հազար) ՀՀ դրամ** տարեկան վճարի դիմաց կառուցապատման իրավունք ունեցող անձին տրամադրել **ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի Գորիս քաղաքի Կոմիտասի փողոց 1/3 (մեկ կոտորակ երեք) հողամաս հասցեում** գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության **0.0006հա (զրո ամբողջ վեց տասհազարերորդական) մակերեսով** հողամասը /հողատեսքը՝ ընդհանուր օգտագործման/ (այսուհետ՝ Օբյեկտ):

1.2.Սույն պայմանագրի գործողության ընթացքում կառուցապատված հողամասի օգտագործման արդյունքում կառուցապատման իրավունք ունեցող անձի ստացած եկամուտները նրա սեփականությունն են:

1.3 Անշարժ գույքը սեփականության իրավունքով պատկանում է Սեփականատիրոջը ՀՀ կադաստրի կոմիտեի Սյունիքի տարածքային ստորաբաժանման կողմից 04.04.2022թ. տրված թիվ 04042022-09-0039 սեփականության իրավունքի գրանցման վկայականի հիման վրա:

1.4. Սեփականատերը երաշխավորում է, որ սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված հողամասը վաճառված, գրավ դրված, ենթավարձակալության կամ անհատույց օգտագործման, այլ անձանց կառուցապատման իրավունքով տրված կամ այլ կերպ ծանրաբեռնված չէ, վեճի առարկա չէ, արգելանքի տակ չի գտնվում, չունի որեւէ սահմանափակում՝ համաձայն **07.04.2022թ.** Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից տրված **N ՄՏ-07042022-09-0444** միասնական տեղեկանքի:

Հողամասը ընդգրկված է ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:

1.5.Սեփականատիրոջ կողմից տրամադրված հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումն այլ անձի հիմք չէ սույն պայմանագիրը լուծելու կամ փոփոխելու համար:

### 2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ

Կառուցապատման իրավունքի ժամկետը սահմանվում է ***5 /հինգ/ տարի ժամկետով:***

### 3. ՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

3.1.Հողամասի նկատմամբ կառուցապատման իրավունքի տրամադրումը չի հանգեցնում դրա նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցման:

3.2.Կառուցապատման ժամկետի ավարտից հետո կառուցապատման իրավունք ունեցող անձը

պարտավոր է հողամասը (բացառությամբ բաժանելի բարելավումների), հաշվի առնելով բնականոն վատթարացումը, ակտով հանձնել հողամասի սեփականատիրոջը:
3.3.Կառուցապատման իրավունքի ժամկետի ավարտից հետո կառուցապատման իրավունք ունեցող անձի կատարած անբաժանելի բարելավումները չեն հատուցվում:

**4. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

4.1.Սեփականատերն իրավունք ունի՝
4.1.1.կառուցապատման իրավունք ունեցող անձից պահանջելու հողամասն օգտագործել սույն պայմանագրի պայմաններին և դրա նշանակությանը համապատասխան.
4.1.2.կառուցապատման իրավունք ունեցող անձի կողմից վճարը (սույն պայմանագրով նախատեսված դեպքում) վճարելու ժամկետների էական խախտման դեպքում նրանից պահանջելու վաղաժամկետ կատարել վճարումը.
4.1.3.եթե կառուցապատման իրավունք ունեցող անձը հողամասից օգտվում է պայմանագրի պայմաններին կամ դրա նշանակությանն անհամապատասխան, ապա պահանջելու լուծել պայմանագիրը և հատուցելու վնասները:
4.2.Սեփականատերը պարտավոր է՝
4.2.1.5-օրյա ժամկետում հանձնման-ընդունման ակտով կառուցապատման իրավունք ունեցող անձին տրամադրել համապատասխան հողամասը.
4.2.2.համաձայնեցված կարգով կառուցապատման իրավունք ունեցող անձի հետ մասնակցել կառուցապատման նպատակով հողամասն արդյունավետ օգտագործելու և այն պատշաճ վիճակում պահպանելու համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը.
4.2.3.կառուցապատման իրավունք ունեցող անձին նախազգուշացնել տրամադրված հողամասի նկատմամբ երրորդ անձանց բոլոր իրավունքների (գրավի իրավունք, սերվիտուտ և այլն) մասին:
4.3. Կառուցապատման իրավունք ունեցող անձն իրավունք ունի՝
4.3.1.սեփականատիրոջից պահանջելու սույն պայմանագրի 4.2.1-ին կետով սահմանված ժամկետում իրեն տրամադրել հողամասը.
4.3.2.սեփականատիրոջից պահանջելու իրեն տրամադրել հողամասին վերաբերող փաստաթղթերը.
4.3.3.հողամասի օգտագործմանն ամբողջովին կամ մասնակիորեն խոչընդոտող թերություններ հայտնաբերելիս՝ իր ընտրությամբ պահանջելու վաղաժամկետ լուծել պայմանագիրը.
4.3.4.սեփականատիրոջ կողմից սույն պայմանագրի 4.2.3-րդ կետում նշված պարտականությունը չկատարվելու դեպքում, պահանջելու նվազեցնել վճարը (այն նախատեսված լինելու դեպքում).
4.3.5.տնօրինելու կառուցապատման իրավունքը՝ փոխանցելու այլ անձի, ազատորեն օտարելու, գրավ դնելու այն, ինչպես նաև կատարելու այլ գործարքներ կառուցապատման իրավունքի նկատմամբ.
4.3.6.կառուցապատման իրավունքը փոխանցելու այլ անձի՝ համապարփակ իրավահաջորդության կարգով:
4.4.Կառուցապատման իրավունք ունեցող անձը պարտավոր է՝
4.4.1.ժամանակին վճարել կառուցապատման իրավունքի համար վճարը (պայմանագրով այն նախատեսված լինելու դեպքում).
4.4.2.հողամասն օգտագործել բացառապես կառուցապատման նպատակով.
4.4.3.կառուցապատման իրավունքն իրականացնել քաղաքաշինական նորմերի ու կանոնների, ինչպես նաև հողամասի նշանակության վերաբերյալ պահանջների պահպանմամբ՝ սահմանված կարգով կառուցել շենքեր և շինություններ, դրանք վերակառուցել կամ քանդել և կառուցապատման ժամկետի ընթացքում տիրապետել և օգտագործել այդ գույքը.
4.4.4.ինչպես պայմանագրի ժամկետն ավարտվելու, այնպես էլ այն վաղաժամկետ դադարելու դեպքում, ոչ ուշ, քան 2 շաբաթ առաջ սեփականատիրոջը գրավոր տեղեկացնել հողամասի նախատեսվող ազատման մասին, և հողամասը բարեկարգ վիճակում, հաշվի առնելով բնականոն վատթարացումը, ակտով հանձնել սեփականատիրոջը.
4.4.5.կառուցապատման իրավունքի պայմանագրի ժամկետն ավարտվելուց մեկ ամիս առաջ սեփականատիրոջը տեղեկացնել պայմանագրի ժամկետը երկարաձգելու իր մտադրության մասին:

**5. ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ԿԱՏԱՐՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԸ ԵՎ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԸ**

5.1.Սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված կառուցապատման իրավունքի տարեկան վարձավճարը **1քմ. համար** կազմում է **3000 (երեք հազար) ՀՀ դրամ,** որը կփոխանցվի Գորիս համայնքի բյուջեին, որի չափը չի կարող պակաս լինել հողի հարկի տարեկան դրույքաչափից:
5.2.Վճարը (վճար նախատեսված լինելու դեպքում) կարող է վերանայվել կողմերից մեկի պահանջով՝ սույն պայմանագրի 9.1-ին կետով սահմանված կարգով:

**6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

6.1.Սեփականատերը 4.2.1-ին կետով սահմանված ժամկետում իր մեղքով հողամասը

ռուցապատման իրավունք ունեցող անձին չտրամադրելու դեպքում, կետանցի յուրաքանչյուր օրվա համար վճարում է տույժ՝ տարեկան վճարի (վճար նախատեսված լինելու դեպքում) գումարի ***0.01*** տոկոսի չափով:

6.2.Տարեկան վճարը ենթակա է վճարման տվյալ տարվա մինչև դեկտեմբերի 25-ը (քսանհինգը), նախատեսված ժամկետից ուշացման դեպքում յուրաքանչյուր օրվա համար սահմանել տույժ՝ վճարել չմուծված գումարի 0.1 տոկոսի չափով:

6.3.Սույն պայմանագրով սահմանված տույժի (տուգանքի) վճարումը կողմերին չի ազատում նրանց վրա դրված պարտավորությունների կատարումից և խախտումների վերացման պարտականությունից:

6.4.Եթե կառուցապատման իրավունք ունեցող անձը պայմանագիրը դադարելուց հետո չի վերադարձրել հողամասը կամ այն վերադարձրել է ժամկետի խախտմամբ, ապա սեփականատերն իրավունք ունի պահանջելու վճար (վճար նախատեսված լինելու դեպքում)՝ կետանցի ամբողջ ժամանակահատվածի համար:

**7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ**

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

**8. ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾԵԼՈՒ ՀԻՄՔԵՐԸ**

8.1.Սեփականատիրոջ պահանջով կառուցապատման իրավունքի պայմանագիրը կարող է դատարանով վաղաժամկետ լուծվել, եթե կառուցապատման իրավունք ունեցող անձը՝

8.1.1.հողամասն օգտագործել է սույն պայմանագրի պայմանների կամ հողամասի նշանակության էական կամ բազմակի խախտումներով.

8.1.2.էականորեն վատթարացել է հողամասի վիճակը.

8.1.3.սույն պայմանագրով սահմանված վճարման (վճար նախատեսված լինելու դեպքում) ժամկետը լրանալուց հետո 2 անգամից ավելի չի կատարել վճարումը:

8.2. Կառուցապատման իրավունք ունեցող անձի պահանջով սույն պայմանագիրը կարող է դատարանով վաղաժամկետ լուծվել, եթե՝

8.2.1.սեփականատերը կառուցապատման իրավունք ունեցող անձի օգտագործմանը չի տրամադրել հողամասը կամ խոչընդոտներ է ստեղծել հողամասը պայմանագրիպայմաններին կամ դրա նշանակությանը համապատասխան օգտագործելու համար.

8.2.2.կառուցապատման իրավունք ունեցող անձին տրամադրված հողամասն ունի դրա օգտագործմանը խոչընդոտող թերություններ, որոնց մասին սեփականատերը չի նշել պայմանագիրը կնքելիս, որոնք նախապես հայտնի չեն եղել կառուցապատման իրավունք ունեցող անձին և վերջինս չպետք է հայտնաբերեր պայմանագիրը կնքելիս.

8.2.3.հանգամանքների բերումով, որոնց համար կառուցապատման իրավունք ունեցող անձը պատասխանատու չէ, հողամասը դարձել է օգտագործման համար ոչ պիտանի:

**9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՓՈՓՈԽՈՒՄԸ, ԼՈՒԾՈՒՄԸ, ԴԱԴԱՐՈՒՄԸ ԵՎ ԵՐԿԱՐԱՁԳՈՒՄԸ**

9.1. Պայմանագրի պայմանների փոփոխումը, դրա լուծումը և դադարումը կատարվում են կողմերի համաձայնությամբ:

9.2. Կառուցապատման իրավունք ունեցող անձը սույն պայմանագրով իր ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարման դեպքում պայմանագրի ժամկետն ավարտվելուց հետո այլ անձանց նկատմամբ՝ նույն տարածքի կառուցապատման իրավունքի (օգտագործման) նոր պայմանագիր կնքելու նախապատվության իրավունք ունի:

**10. ՀՈՂԱՄԱՍԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄՆԵՐԸ**

10.1. Հողամասից կառուցապատման իրավունք ունեցող անձի կատարած բաժանելի բարելավումները համարվում են նրա սեփականությունը:

**11. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ**

Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերի լուծումը կատարվում է դատական կարգով:

**12. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

12.1.Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու համար պատասխանատվության են ենթարկվում Հայաստանի Հանրապետության

օրենքով սահմանված կարգով:
12.2. Սույն պայմանագիրը կնքված է ***չորս*** հավասարազոր օրինակներից, որից մեկ պահվում է Գորիս նոտարական տարածքում, մյուսները տրվում են կողմերին: Օրի միջև հակասությունների դեպքում նախապատվությունը տրվում է նոտարի մոտ օրինակին:
12.3. Սույն պայմանագրից բխող իրավունքները **30-օրյա ժամկետում ենթակա են** պետական գրանցման ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմում:

Գորիս համայնքի լիազորված անձ՝

Կառուցապատման իրավունք ունեցող անձ՝ <<ՊՐԵՍ ՍՏԵՆԴ>> ՍՊԸ-ի լիազորված անձ

երկու հազար քսաներկու թվականի ապրիլի քսանյոթին սույն պայմանագիրը վավերացված է իմ՝ ՀՀ <<Սյունիքի մարզ>> նոտարական տարածքի նոտար Առնո Գրիգորի Առաքելյանիս կողմից: Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Կողմերի ինքնությունը, գործունակությունը, ինչպես նաև իրավաբանական անձի իրավունակությունը, նրա ներկայացուցչի լիազորությունները և անշարժ գույքի նկատմամբ գրավատուի սեփականության իրավունքը ստուգված է:

ՀՀ Քաղ. Օրենսգրքի 135 հոդվածի համաձայն սույն պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման անշարժ գույքի պետական միասնական կադաստր վարող պետական կառավարման հանրապետական մարմնի համապատասխան ստորաբաժանումում:

Գրանցված է գրանցամատյանում 1180

Գանձված է պետական տուրք երկու հազար ՀՀ դրամ և ծառայության վճար տասը հազար ՀՀ դրամ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Առնո Գրիգորի Առաքելյան